

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԿԱՊԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ**



Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴԻՐԱՄԻ ԿԱՊԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ
ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ**

Հաստատված է

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Կապանի մասնաճյուղի գիտական խորհրդի 2023 թվականի հունիսի 30-ի նիստի թիվ 012/3 որոշմամբ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՊԱՆԻ ՄԱՍՆԱԾՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) Կապանի մասնաճյուղի (այսուհետ՝ Մասնաճյուղ) գիտական խորհրդին կից մշտական հանձնաժողովների (այսուհետ՝ Հանձնաժողովներ) կանոնակարգը սահմանում է Հանձնաժողովների գործունեության նպատակը, հիմնական խնդիրները և իրավասությունները, ձևավորման կարգը և աշխատակարգը, Հանձնաժողովի նախագահի, քարտուղարի և անդամների իրավունքներն ու պարտականությունները, նիստերի աշխատակարգը:
2. Հանձնաժողովներն իրենց գործունեությունն իրականացնում են ղեկավարվելով Մասնաճյուղի կանոնադրությամբ, գիտական խորհրդի կանոնակարգով և որոշումներով, սույն կանոնակարգով:
3. Հանձնաժողովների լիազորությունների ժամկետի և կազմի հաստատումը, դրանց կազմերում փոփոխությունները կատարվում են գիտական խորհրդի կողմից:
4. Հանձնաժողովն իր ոլորտներին վերաբերող հարցերը քննարկում է Մասնաճյուղի տնօրենի հանձնարարությամբ:
5. Հանձնաժողովի որոշումը գիտական խորհրդում հարցի քննարկման համար ունի երաշխավորական կամ խորհրդատվական նշանակություն:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

6. Հանձնաժողովները ստեղծվում են գիտական խորհրդի գործունեության անընդհատությունն ապահովելու և արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:
7. Գիտական խորհրդին կից ստեղծվում են հետևյալ Հանձնաժողովները.
 - 1) *Կանոնադրական համակարգման, կառուցվածքային փոփոխությունների և ստրատեգիական պլանավորման,*
 - 2) *Կրթական ծրագրերի, ուսումնամեթոդական հարցերի և որակի ապահովման,*
 - 3) *Գիտական կոչումների ներկայացման և մրցութային հարցերի:*
8. Հանձնաժողովների կազմերն առաջադրում և գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացնում Մասնաճյուղի տնօրենը:
9. Հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել միայն գիտական խորհրդի անդամներ:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

10. **Կանոնադրական համակարգման, կառուցվածքային փոփոխությունների և ստրատեգիական պլանավորման հանձնաժողովի** հիմնական խնդիրներն են՝ Մասնաճյուղի կանոնադրությանը, կանոնակարգերին, կարգերին և այլ իրավական ակտերին, կառուցվածքային փոփոխություններին ու ստրատեգիական պլանավորմանը վերաբերող հարցերի ուսումնասիրումը, քննարկումը և դրանց վերաբերյալ գիտական խորհրդին առաջարկության ներկայացումը:
11. **Կրթական ծրագրերի, ուսումնամեթոդական հարցերի և որակի ապահովման հանձնաժողովի** հիմնական խնդիրներն են՝ կրթական ծրագրերին, մասնագիտություններին, հրատարակչական պլանին, ուսումնամեթոդական աշխատանքների տպագրությանը և որակի ապահովմանը վերաբերող հարցերի ուսումնասիրումը, քննարկումն ու դրանց վերաբերյալ գիտական խորհրդին առաջարկության ներկայացումը:
12. **Գիտական կոչումների ներկայացման և մրցութային հարցերի հանձնաժողովի** հիմնական խնդիրներն են՝ գիտական կոչումների ներկայացմանը, պրոֆեսորադասախոսական և այլ ընտրովի պաշտոնների տեղակալմանը վերաբերող հարցերի ուսումնասիրումը, քննարկումն ու դրանց վերաբերյալ գիտական խորհրդին առաջարկության ներկայացումը:

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

13. Հանձնաժողովն իրավունք ունի Մասնաճյուղի տնօրենի համաձայնությամբ.
 - 13.1. Մասնաճյուղի ստորաբաժանումների ղեկավարներից ստանալ տեղեկատվություն, որն անհրաժեշտ է Հանձնաժողովի աշխատանքի համար,
 - 13.2. խորհրդատվություն ստանալու համար ներգրավել Մասնաճյուղի համապատասխան աշխատակիցների:

V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ, ՔԱՐՏՈՒՂԱՐԸ ԵՎ ԱՆԴԱՄՆԵՐԸ

14. **Հանձնաժողովի նախագահը՝**
 - 14.1. ղեկավարում է Հանձնաժողովի աշխատանքը, հրավիրում և վարում Հանձնաժողովի նիստերը,
 - 14.2. կազմակերպում է Հանձնաժողովի որոշումների կայացման գործընթացը,
 - 14.3. ստորագրում է Հանձնաժողովի նիստերի արձանագրությունները և որոշումները,
 - 14.4. գիտական խորհրդի նախագահին ներկայացնում է քննարկվող հարցի վերաբերյալ Հանձնաժողովի առաջարկությունը,
 - 14.5. ունի Հանձնաժողովի անդամին վերապահված իրավունքներն ու պարտականությունները:
15. **Հանձնաժողովի քարտուղարը՝**
 - 15.1. Հանձնաժողովի անդամներին իրազեկում է նիստերի հրավիրման մասին, տրամադրում նիստի օրակարգը,
 - 15.2. ապահովում է տեղեկատվության փոխանակումը Հանձնաժողովի անդամների միջև,
 - 15.3. արձանագրում է Հանձնաժողովի նիստերը, ստորագրում նիստերի արձանագրությունները, որոշումները և արձանագրություններից քաղվածքները,
 - 15.4. ապահովում է Հանձնաժողովի փաստաթղթերի պահպանումը,
 - 15.5. ունի Հանձնաժողովի անդամին վերապահված իրավունքներն ու պարտականությունները:
16. **Հանձնաժողովի անդամը՝**
 - 16.1 պարտավոր է մասնակցել Հանձնաժողովի աշխատանքներին,
 - 16.2 քվեարկությունների միջոցով մասնակցում է Հանձնաժողովի որոշումների կայացմանը,
 - 16.3 իրավունք ունի քննարկված հարցերի վերաբերյալ ունենալ հատուկ կարծիք և այն գրավոր ներկայացնել գիտական խորհրդին:

VI. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԸ

17. Հանձնաժողովն իր գործունեությունը կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են ըստ անհրաժեշտության՝ Հանձնաժողովի նախագահի կողմից:
18. Հանձնաժողովի նիստերը կարող են անցկացվել նաև էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցների կիրառմամբ:
19. Անհրաժեշտության դեպքում Հանձնաժողովի նիստին կարող են հրավիրվել քննարկվող հարցի հետ առնչություն ունեցող Մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կամ վարչական կազմերի ներկայացուցիչներ:
20. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրա աշխատանքին մասնակցում է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդը: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ: Ձայների հավասարության դեպքում Հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:
21. Եթե Հանձնաժողովի անդամը որոշման վերաբերյալ ունի հատուկ կարծիք, ապա

- այն արձանագրվում է:
22. Հանձնաժողովի նիստերն արձանագրվում և ստորագրվում են Հանձնաժողովի նախագահի և քարտուղարի կողմից:

VII. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

23. Հանձնաժողովների լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են գիտական խորհրդի որոշմամբ:
24. Սույն կանոնակարգը հաստատվում, փոփոխվում կամ լրացվում է գիտական խորհրդի որոշմամբ:
25. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում գիտական խորհրդում քվեարկությամբ հաստատվելուց անմիջապես հետո: